ըռւած է նոցա, եւ զիա՞րդ հնար իցէ յանիրաւի առնուլ զայն 'ի ձեռաց նոցա և տալ ձեզ. եւ 'ի լսել դեսպանին, խնդրեաց Սարգիս եպիսկոպոս 'ի Սուլթանէն, վերստին հրովարտակաւ հաստատել զսեփհականութիւն ազգին իւրոյ, զի մի 'ի դարձին իւրում յԵրուսաղէմ նեղեսցեն Վիրք զինքն և զիւրսն։ Եւ նա կատարեաց զխնդիր նորին՝ պատուիրելով գործակալաց իւրոց չնեղել ումեք լինել ձեռնամուխ 'ի վիճակին Հայոց, զոր ժառանգեալ են 'ի վաղ ժամանակաց. 'ի Թուին Հիճրեթի ٧١٢ (1312)։ Եւ այս դարձ արար Սարգիս Պատրիարգ 'ի վիճակն իւր յԵրուսաղէմ։

Գրի եւ այս 'ի յիշատակարանս ինչ. « Ի Թագաւորութեան Հայոց, 'ի դառն և յանբարի ժամանակիս, որ լի էր ազգի ազգի վշտօք և նեղութեամբ, զի ազգն Իսմայելեան մաշէին 'ի սուր և 'ի գերութիւն զքրիստոնեայս յամենայն տեղիս, առին զմայրաքաղաքն Հայոց զՄելտինէ և աւարի ետուն, և զաղբեալսն 'ի սրոյ վարեցին 'ի գերութիւն. և զայլ քաղաքս և զամրոցս հիմն 'ի վեր տապալեցին։ Եւ որ մեծն է ամենայն վշտաց եւ աղետից՝ ասացից՝ զի այսօր 128 ամ է որ Ս. Քաղաքս Երուսաղէմ և ամենայն տեղիք անօրինականաց Քրիստոսի, է առնակոխ և 'ի մեծի անարգութեան 'ի սոյն ազգէ, և չէ հնար ումեք զայս ընդ գրով արկանել. (1316)։

Յետ վախճանի Սարգսի եպիսկոպոսի և յաջորդելոյ զաթոռն Աստուածատրոյ, և անցանելոյ եօթն ամաց, վերըստին չարժեցին Վիրք զխնդիրն. եւ զի յառաջին Նուագի չկարացեալ շահել ինչ ձեռն ունայն ելին յատենէ, իսկ 'ի սմին ժամանակի միաբանեցին ընդ իւրեանս զԼատինս, և 'ի միասին թախանձէին զՍուլթանն, ոչ միայն առնուլ զՍ. Յակոբ, այլ եւ զԳողգոթայն տեղի խաչելութեանն Քրիստոսի, 'ի տաճարին Ս. Յարութեան։ Վաղ ընդ փոյթ հասին յականջս միաբանացն Հայոց ամբաստանութիւնք և խնդիրք երկուց ազգաց. նմին իրի փութացեալ առաքեցին յԵգիպտոս զՏէր Սահակ և զՏէր Յովսէփ, տուեալ 'ի ձեռս զկարեւոր գրեանս։ Հասեալ սոցա անդ, զկնի աւուրց ինչ, ելին յատեանն Սուլթանին բազմութեամբ Հայ ժողովրդոց։ Եւ յետ ընթեռնլոյ զվաւերական գրեանս, և